ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հակոբյան Դավիթ Խաչատուրի

Նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. տեսական-իրավական վերլուծություն

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2018

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

Акопян Давид Хачатурович

Проблемы иерархии нормативно - правовых актов в Республике Армения: теоретико - правовой анализ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 - "Теория и история государства и права, история государственных и правовых учений"

Ереван - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Հ. Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ. Գ. Պետրոսյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու **Հ. Զ. Սարգսյան**

«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. հունիսի 30-ին, ժամը 11^{00}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհուրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմին փ., 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2018թ. մայիսի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավաբանական գիտությունների թեկնածու՝ **Զ. Հ. Հայրապետյան**

Тема диссертации утверждена на заседании Ученого совета Института философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Г. Г. Сафарян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Р. Г. Петросян**
кандидат юридических наук О. **З. Саркисян**

Ведущая организация: **Академия образовательного комплекса Полиции РА**

Защита состоится 30 июня 2018г. в 11^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 30 мая 2018г.

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук **Дж. А. Айрапетян**

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Թեմայի հետազոտության արդիականությունը: Սույն ատենախոսական աշխատանքի հետազոտության արդիականությունն, ամենից առաջ, պայմանավորված է 2015 թվականի դեկտեմբերի 6-ին հանրաքվեի արդյունքների հիման վրա ընդունված ՀՀ Սահմանադրության նոր խմբագրությամբ, որը ազգային սահմանադրական զարգացումների ընթացքում առաջին անգամ հիմնական օրենքի մակարդակով ամրագրում է ազգային իրավական ակտերի (նորմերի) աստիճանակարգումը (ՀՀ Սահ. 5-րդ հոդված), ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ[1], որն էապես տարբերվում է նախկինում գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքից[2], ինչպես նաև իրավակարգավորումների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ:

Նորմատիվ-իրավական ակտերի աստիճանակարգման (հիերարխիայի)[3] հիմնախնդիրը միշտ էլ եղել է իրավագիտության խնդրահարույց և ոչ լիարժեք ուսումնասիրված հարցերից մեկը: Այս առումով, պատահական չէ, որ ՀՀ փոփոխված Սահմանադրության նախագծի հեղինակները կարևորել են այս հարցը և փորձել են որոշակիորեն լուծել սահմանադրական հարթության վրա:

Ընդունված է համարել, որ իրավունքի հիերարխիկ կառուցվածքի գաղափարը խաղում է մեծ դեր իրավակարգավորման գործընթացում, քանի որ իրավունքի աղբյուրների կանխորոշված և հստակ աստիճանակարգումը նորմատիվ ընդհանրացումների և իրավունքի նորմերի կոնկրետացման և իրականացման գործընթացը դարձնում է առավել կանոնավորված:

Բացի դրանից, մայրցամաքային իրավական ավանդույթերով դաստիարակված իրավաբանի համար իրավական հիերարխիայի անհստակության, խնդրայնության կամ հակասության փաստի առկայության գիտակցումը՝ զգայուն հարված է իրավական որոշակիության իդեալին և իրավունքի ռացիոնալության վերաբերյալ պատկերացումներին: Այդ իսկ պատճառով իրավական հիերարխիայում ցանկացած վիճելի կարևոր հարց վերածվում է ակտիվ բովանդակալից և կառուցողական քննարկումների առարկայի:

Վերոնշվածով է պայմանավորվում թեմայի ընտրությունը և հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական ուսումնասիրության վիճակը: Նորմատիվ իրավական

[1] Տես՝ ՀՀՊՏ 2018. 03.28/23 (1381). Հոդ. 373:
[2] Տես՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, ընդունվել էր 2002թ. ապրիլի 3-ին (ՀՕ-320):
[3] Սույն աշխատանքում «աստիճանակարգում» և «հիերարխիա» եզրույթները հանդես են գալիս որպես նույնական և հավասարազոր հասկացություններ:

ակտերի աստիճանակարգման (հիերարխիայի) հիմնախնդիրը հետազոտվել է թե՛ խորհրդային և թե՛ հետխորհրդային իրավագիտության մեջ: Սակայն, հետխորհրդային իրավական համակարգերի՝ այդ թվում Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի վերաբերյալ աշխատություններում դեռևս բացակայում է հիմնախնդրի համակողմանի և համակարգված գիտական հետազոտությունը, թերևս եղել են մի շարք աշխատանքներ, մասնավորապես՝ Վ.Ա. Օհանյանի թեկնածուական ատենախոսությունը՝ նվիրված՝ իրավունքի աղբյուրների մի շարք խնդիրների հետազոտությանը[4]:

Նշված հիմնախնդրի բացահայտման ուղղությամբ որոշակի ներդրում ունեն հայրենական գիտնականներ՝ Ն. Ա. Ապիյանը, Ն. Ա. Այվազյանը, Վ. Ռ. Նազարյանը, Ռ. Գ. Պետրոսյանը, Գ. Հ. Սաֆարյանը, Հ. Մ. Ստեփանյանը, Վ. Վ. Ստեփանյանը, Ա. Գ. Վաղարշյանը, Վ. Ս. Ներսեսյանցը, իսկ արտասահմանյան գիտնական իրավաբաններից՝ Ս. Ս. Ալեքսեևը, Մ. Ի. Բայտինը, Վ. Մ. Բարանովը, Յու. Ա. Տիխոմիրովը, Հ. Քելզենը, Հ. Հարտը և այլք:

Հավուր պատշաճի գնահատելով վերոնշված և չնշված գիտական հետազոտությունները, այնուամենայնիվ, գտնում ենք, որ սույն հետազոտությունը՝ հատկապես ՀՀ փոփոխված Սահմանադրության համատեքստում, խիստ կարևորվում է՝ թե՛ տեսական և թե՛ գործնական ասպեկտներով:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն ատենախոսական աշխատանքի նպատակն է համակողմանի և համակարգված վերլուծության ենթարկել ազգային իրավունքում նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգման (հիերարխիայի) հետ կապված հիմնախնդիրները, ինչպես նաև գիտականորեն հիմնավորված առաջարկություններ ներկայացնել ազգային նորմատիվ իրավական ակտերի հիերարխիկ կառուցվածքի կատարելագործման համար՝ ազգային իրավունքի զարգացման ներկա փուլում:

Դրված նպատակին հասնելու, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգման (հիերարխիայի) համալիր իմաստավորման համար, ըստ հեղինակի մտահղացման՝ անհրաժեշտ է լուծել մի շարք գիտամեթոդական խնդիրներ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել մի շարք խմբերի.

Առաջինը, դրանք իրավունքի աղբյուրների (ձևերի) հիերարխիայի

[4] Տե՛ս **Օհանյան Վ.Ա.** Իրավունքի աղբյուրների հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում (տեսագործնական վերլուծություն): Սեղմագիր իրավ.գիտ.թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2009:

հայեցակարգային մոդելների կառուցման **խնդիրներ են.**

- բացահայտել հիերարխիայի ընդհանուր գիտական հասկացությունը և իրավունքի, և մասնավորապես, իրավունքի աղբյուրների (ձևերի) համակարգի նկատմամբ կիրառական հիերարխիայի տեսության հասկացությունների ապարատի կիրառության առանձնահատկությունները,
- վերլուծել իրավական հիերարխիայի բովանդակային ասպեկտները,
- ձևակերպել իրավունքի աղբյուրների հիերարխիայի կառուցման և գործառության հիմնական սկզբունքները,
- դիտարկել իրավունքի աղբյուրների հիերարխիայի մակարդակների առանձնացման չափորոշիչների սահմանման խնդիրները:

Երկրորդը, անհրաժեշտ է բացահայտել նորմատիվ իրավական ակտերի առարկայական հիերարխիան:

Երրորդը, անհրաժեշտ է վերլուծել, թե ինչ կերպ են նորմատիվ իրավական ակտերի հիերարխիայի նկատմամբ գոյություն ունեցող դոկտրինալ մոտեցումները և ըստ վերջինիս վերաբերյալ օրենսդրական մարմնի հեղինակային դրույթները արտացոլվում և զարգանում դատական պրակտիկայի մեջ: Դա հնարավորություն կտա, ոչ թե ուղղակի տեսնել, թե ինչպես են դատավորները դիտարկում նորմատիվ ակտերի հիերարխիայի կիրառության հետ կապված խնդիրները, այլ նաև փորձել կանխատեսել ազգային իրավական համակարգում տվյալ հայեցակարգի հեղինակությունը և կենսունակությունը:

Չորրորդ, իրավունքի մեջ հիերարխիայի կիրառության նկատմամբ հեղինակային մոտեցման և նորմատիվ ակտերի հիերարխիայի իմաստավորման միջոցով ստացված արդյունքների հաշվառմամբ, անհրաժեշտ է տալ աստիճանակարգման (հիերարխիայի) հիմքերը, առաջադրել դրա հեռանկարային (էվրիստիկ) զարգացման միտումները և ձևավորել որոշ հանձնարարականներ՝ ըստ հարցի, թե ինչ կերպ է անհրաժեշտ հետազոտողներին, օրենսդիրներին և իրավակիրառողներին վերաբերվել հիերարխիայի հիմնախնդրին:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Սույն ատենախոսական աշխատանքի օբյեկտը նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգվածության համակարգն է:

Հետազոտության առարկան է՝ ազգային իրավունքի նորմատիվ իրավական ակտերի հիերարխիայի հիմնախնդիրների հետ կապված համալիր ուսումնասիրությունը և դրա արդյուքների հիման վրա մշակել գիտականորեն

հիմնավորված առաջարկություններ և հանձնարարականներ՝ կատարելագործելու և հստակեցնելու ազգային իրավունքի նորմատիվ իրավական ակտերի հիերարխիկ կառուցվածքի համակարգը:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները: Սույն ատենախոսական աշխատանքի ընթացքում օգտագործվել են ինչպես համընդհանուր դիալեկտիկայի կատեգորիաներն ու օրենքները, տրամաբանության հիմունքները, այնպես էլ հատուկ իրավաբանական մեթոդները՝ ֆորմալ-իրավաբանական վերլուծություն, համակարգային-կառուցվածքային վերլուծություն, իրավահամեմատական վերլուծություն և այլն:

Նման մեթոդաբանության մոտեցումների շնորհիվ հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված նպատակներն ու խնդիրները:

Հետազոտության գիտական նորույթը: Սույն աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակը բացահայտել է իրավունքի համակարգում նորմատիվ իրավական ակտերի համակարգվածության և հիերարխիկ կառուցվածքի էությունը, առանձնահատկությունները: Հեղինակն առաջ է քաշել «նորմատիվ-իրավական ակտերի հիերարխիա (աստիճանակարգություն)» կատեգորիան, որում նորմատիվ իրավական ակտերը աստիճանակարգված են ինչպես իրենց իրավաբանական ուժով ու ընդունող մարմնի հեղինակությամբ, այնպես էլ հասարակական հարաբերությունները կարգավորելու կարևորությամբ ու նշանակելիությամբ:

Բացի դրանից, աշխատանքում նորմատիվ իրավական ակտերի հիերարխիկ կառուցվածքը դիտարկվում է տարբեր շերտերում (մակարդակներում)՝ գործող օրենսդրության, իրավունքի և իրավական համակարգերում:

Աշխատանքում նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությունը դիտարկվում է որպես ինքնուրույն և հարաբերականորեն կայուն համակարգ, սակայն իրավակարգավորման իմաստով՝ որպես կուռ միասնություն ու ամբողջականություն ներկայացվող փոփոխական և հարաշարժ կատեգորիա, որը ճկունություն է տալիս իրավական բացերը լրացնելու և իրավական հակասությունները վերացնելու համար: Այս առումով իրավական ակտերի և նորմերի հիերարխիայի հետ կապված հարցերի պարզաբանումն ունի ոչ միայն գիտաճանաչողական, այլև գործնական-կիրառական զգալի նշանակություն:

Հետազոտության գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում.

1. Ազգային իրավունքի աղբյուրների համակարգվածության հիմքում ընկած են միմյանց փոխազդող, իրենց բնույթով տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ հարաբերությունները, որոնք միջնորդված են իրավական նորմերի միջոցով և համապատասխան դրական իրավունքի ձևերի (աղբյուրների) տեսքով (դիցուք՝ Հայաստանում՝ Սահմանադրություն, սահմանադրական և սովորական օրենքներ, վավերացված միջազգային պայմանագրեր, նորմատիվ պայմանագրեր, ենթաօրենսդրական ակտեր, բարձր դատարանների նախադեպային իրավունքի որոշումներ և իրավական դիրքորոշումներ, սովորութային իրավունքի նորմեր), որոնք կազմում են ազգային իրավական համակարգի միջուկը:

2. Դրական իրավունքի աղբյուրների համակարգվածության բնույթն արտահայտվում է ոչ միայն զուտ իրավական մատերիայի նկատմամբ, որը կազմակերպված և համակարգված ձևով հանդես է գալիս իրավունքի համակարգի, օրենսդրության համակարգի և իրավական համակարգի միջոցով, այլև իրավունքի հետ անմիջականորեն կապված այլ համակարգերի՝ դատական, օրենսդիր և գործադիր մարմինների կամ էլ վերացական իրավական եզրույթների, դոկտրինների, ուսումունքների նկատմամբ: Այդուհանդերձ, նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությունը (ստորադասությունը) առավել ցայտուն է դրսևորվում իրավունքի և օրենսդրության համակարգում, քանզի դրանցում է արտահայտվում գրավոր (պոզիտիվ) իրավունքի և գրավոր իրավական նորմերի միասնական ամբողջականությունը: Հետևաբար, տեսական և գործնական առումով էական նշանակություն ունի գրավոր (պոզիտիվ) իրավունքի և օրենսդրական ակտերի աստիճանակարգության որոշակիացումը, քանի որ չգրված իրավունքի (բնական իրավունքի, բանական իրավունքի) համակարգում նորմերի աստիճանակարգության որոշումը, ըստ էության, անհնարին է և գործնականում անիմաստ: Բայց իրավաբանական առումով որոշակի նշանակություն ունի գրավոր իրավունքի (պոզիտիվ) և չգրված իրավունքի (բնական իրավունքի) աստիճանակարգության որոշման խնդիրը, որի լուծումը պայմանավորված է տվյալ հասարակության իրավական մշակույթի և իրավագիտակցության զարգացվածության աստիճանից, ժողովրդավարական և իրավական արժեքների նկատմամբ տվյալ սոցիումի վերաբերմունքից:

3. Աշխատանքում նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգման (ստորադասության) հիմքում ընկած է հեղինակի հետևյալ հայեցակարգային

մոտեցումը. ակտի իրավազորության (իրավաբանական) ուժը, ակտը ընդունող մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակը և իրավասությունը, հասարակական հարաբերությունների նորմատիվ կարգավորման սոցիալական նշանակությունը մարդկային չափումների իրավական արժեբանության տեսանկյունից:

Այս առումով, ըստ հեղինակի՝ երկու կամ ավելի հավասարազոր նորմատիվ իրավական ակտերի հակասության կամ դրանց առաջնայնության վերաբերյալ հարցի լուծման համար՝ վճռորոշ նշանակություն ունեն մարդկային չափումների և իրավական արժեբանության (արժեքային համակարգի) չափորոշիչները:

4. Կառուցված լինելով համակարգվածության և հիերարխիկ բնույթի սկզբունքների հիման վրա, նորմատիվ իրավական ակտերի ընդհանուր համակարգը կոնկրետանում է նրա սահմաններում առաջացող ըստ պահանջարկի չափի մասնավոր համակարգերում (ենթահամակարգերում) և նրանց միջոցով էլ իրականացվում է: Տվյալ մոտեցումը հավասարապես վերաբերում է առանց բացառության ինչպես բոլոր իրավական ձևերին և իրավական երևույթներին, այնպես էլ դրանք արտացոլող հասկացություններին: Թե՛ առաջինները և թե՛ մյուսները կառուցվում և հարաբերվում են մեկը մյուսի հետ ոչ միայն համակարգվածության և տրամաբանության սկզբունքի, այլև որոշակիության և անորոշության, հարադրության և հակասության հիման վրա:

5. Նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգվածության սկզբունքի էությունը ընդհանրացված ձևով կայանում է նրանում, որ դրանում պարունակվող իրավական նորմերը իրավակարգավորումների գործընթացում գործեն որպես միասնական ամբողջական համակարգ և արդյունավետ կառուցակարգ, ինչով պայմանավորված է ժողովրդավարական սկզբունքների և մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանությունը, հասարակության և պետության անվտանգության ապահովումը:

6. Նորմատիվ իրավական ակտերի հիերարխիայի համակարգի առանձնահատկություններից է նաև այն հանգամանքը, որ իրավաբանական ուժ ունեցող ակտերի ստորադաս կապերի հետ անպայմանորեն հաստատվում և այս կամ այն տեսքով արտահայտվում են նաև վերադաս մարմինների ակտերի բովանդակությունը ստորադաս մարմինների ակտերում կոնկրետացնելու, փոխլրացնելու, համադասելու անհրաժեշտությունը: Հենց նշված կապերի մեջ են արտացոլվում դրական իրավունքի աղբյուրների (նորմատիվ իրավական ակտերի) աստիճանակարգվածության (ստորադասության) սկզբունքի իմաստը և

բովանդակությունը:

7. Աշխատանքում հիմնավորվում է հեղինակային այն մոտեցումը, ըստ որի աստիճանակարգությունը (ստորադասությունը) ազգային իրավական համակարգում գործում է վավերացված միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի, կոնվենցիաների) և ազգային իրավունքի նորմերի միջև: Եթե սովորական օրենքների և ենթաօրենսդրական ակտերի պարագայում (հակասության դեպքում) գործում են վավերացրած միջազգային պայմանագրի նորմերը, ապա հարցը բաց է մնում սահմանադրական օրենքների դեպքում: Մեր կարծիքով, վավերացված միջազգային պայմանագրերի և սահմանադրական օրենքների դրույթների միջև հակասության հարցը կարող է լուծել միայն ՀՀ Սահմանադրական դատարանը (համապատասխան դիմումի դեպքում)՝ փոխկապված ՀՀ Սահմանադրության դրույթների և վավերացված պայմանագրերի (համաձայնագրերի) միջազգայնորեն ճանաչված պրակտիկայի համատեքստում: Հետևաբար, գտնում ենք, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում անհրաժեշտ է կատարել փոփոխություն՝ կապված վավերացված միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) և սահմանադրական օրենքների հակասության վերաբերյալ:

8. Եթե նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ օրենսդրությամբ ամրագրված աստիճանակարգությունը ընդհանուր առմամբ կարգավորված է, ապա նույնը չենք կարող ասել իրավունքի այլ աղբյուրների՝ դատական նախադեպի, վարչական նախադեպի, իրավական սովորույթի և դոկտրինի վերաբերյալ: Մեր կարծիքով, դրանց ստորադասության հարցը կարող է օպտիմալ լուծվել բացառապես կոնկրետ իրավական հարցի շրջանակներում և ՀՀ վավերացված՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի համատեքստում: Բացի դրանից, վերոնշված աղբյուրների (վարչական և դատական նախադեպի, սովորույթի) միջև հարաբերությունների հիերարխիկ բնույթի մասին կարելի է խոսել միայն պայմանականորեն, հիմնվելով բանականության փաստարկների և մեկնաբանությունների մեթոդաբանության և իրավակիրառ պրակտիկայի համադրության հիման վրա:

9. Ինչ վերաբերում է իրավունքի տվյալ ձևերի և օրենքի միջև հարաբերությունների հիերարխիկ բնույթին, ապա պետք է արձանագրել, որ ռոմանոգերմանական իրավական համակարգի երկրներում, որոնք ընդունում և սահմանադրական կարգով ամրագրում են օրենքի գերակայության սկզբունքը, այս հարցը միանշանակ լուծվում է,

այսինքն՝ իրավունքի աղբյուրների (ձևերի) հիերարխիայում ամենաբարձր աստիճանը անփոփոխ կերպով գրավում է միայն գրավոր օրենսդրական ակտը (Սահմանադրությունը, սահմանադրական օրենքը և օրենքը):

Հարցը բարդանում է նախադեպային, ավանդական և կրոնական իրավական համակարգերի դեպքում, որոնցում քննարկվող հարցը միանշանակ լուծում չունի և այդ համակարգերի իրավաբանները և իրավակիրառ մարմինները հարցը լուծում են տվյալ իրավական կազուսի սահմաններում, որը կարող է ընդունելի լինել համանման գործերի (դատական կամ վարչական) համար:

10. Աշխատանքում հեղինակը հիմնավորում է այն տեսակետը, ըստ որի նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգվածությունը և համակարգվածությունը ինքնաբերաբար օբյեկտիվ կատեգորիաներ են ցանկացած իրավական համակարգի, քանի որ առանց աստիճանակարգության (ստորադասության) և համակարգվածության անհնարին է ապահովել իրավակարգավորումների արդյունավետությունը, սոցիալական արդարությունը և առաջընթաց զարգացումը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Սույն ատենախոսական աշխատանքի տեսական նշանակությունը նրանում է, որ մենագրության մակարդակով ներկայացված է նորմատիվ-իրավական ակտերի աստիճանակարգության (հիերարխիայի) հետ կապված համալիր հիմնախնդիրների վերլուծությունը, որն իր հերթին կնպաստի ապագա հետազոտողների աշխատանքների իրականացմանը:

Գործնական առումով այն կարող է օգտակար լինել իրավունքի տեսության ուսումնառության ժամանակ, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների աշխատակիցների համար:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը: Սույն ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ իրականացվել է աշխատանքի քննարկումը և գրախոսությունը:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածական մասից, չորս գլխից, որոնք ներառում են 10 ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի համառոտ բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի հետազոտության արդիականությունը, ներկայացվում է գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ **«Աստիճանակարգությունը (հիերարխիան) իրավունքի մեջ ընդհանուր բնութագիրը»** վերտառությամբ բաղկացած է երկու ենթագլխից:

Աշխատանքի առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Աստիճանակարգության (հիերարխիայի) համագիտական հասկացությունը, էությունը և հատկանիշները»** վերնագրով, բացահայտվում են աստիճանակարգության (հիերարխիայի) գիտական հասկացությունը, էությունը և բնութագրական հատկանիշները:

Ատենախոսական աշխատանքում աստիճանակարգությունը (հիերարխիան) դիտարկվում է որպես բազմամակարդակ և բազմաբնույթ համակարգերի կառուցվածքային կազմակերպման սկզբունք՝ հիմնված վարից վեր և վերից վար աստիճանական կապերի և փոխազդեցությունների վրա: Այլ կերպ ասած. աստիճանակարգությունը սահմանվում է որպես ստորին աստիճանից դեպի վերին աստիճան բաշխված (հաջորդական ենթակայության կարգով) համակարգ:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի համակարգում աստիճանակարգության (հիերարխիայի) իմաստավորման առանձնահատկություն-ները»** վերնագրով, հեղինակը քննարկում է իրավունքի մեջ հիերարխիայի խնդրայնության վերաբերյալ առավել լայն տեսանկյունները, որոնք ըստ հեղինակի հնարավորություն են ընձեռնում իրականացնել նորմատիվ իրավական ակտերի գիտական աստիճանակարգումը:

Իրավունքի մեջ հիերարխիան հեղինակը դիտարկում է երեք առումով.

1. Որպես իրավական նորմերի (աղբյուրների) նկարագրության, վերացարկման մակարդակ:

2. Որպես ընդունվող որոշման բարդության մակարդակների հիերարխիա (որոշման ընդունան շերտերի հիերարխիա): Այս տեսանկյունում անհրաժեշտ է խոսել նրա վերաբերյալ, որ իրավունքի մեջ գոյություն ունի մի քանի ստորադասական մակարդակներ, որոնցում տեղի է ունենում մարդկային գործունեության այս կամ այն

ոլորտների առավել համարժեք իրավական կարգավորման համար իրավաբանական միջոցների ընտրություն: Այստեղ կարող ենք խոսել նրա վերաբերյալ, որ իրավունքի էության-բովանդակային մակարդակը (ինչ է հանդիսանում իրավունք, ինչն է իրավունքի մեջ գլխավորը, ում (ինչին) է այն ծառայում) հանդիսանում է հիմք առավել բարդ գործունեության որոշակի ակտի իրավաչափության կամ անիրավության վերաբերալ կոնկրետ վճռի ընդունման համար:

3. Որպես կազմակերպչական հիերարխիա: Այստեղ ողջ պարզությամբ կարելի է հիմնավորել, որ իրավունքի մեջ հիերարխիայի էության-բովանդակային մակարդակը կազմակերպչական ձևով պետք է ենթարկվի ֆորմալ մակարդակին և հետագայում ազդի իրավունքի իրական գործառնության (իրականացման) վրա, քանի որ իրավունքը ինքնին միայն որպես ձև անիմաստ է այն իրավական գաղափարներից, արժեքներից, նպատակներից խզման մեջ, որոնք ձևավորվում են էության-բովանդակային մակարդակում: Հատկապես այս մակարդակում են հաստատվում իրավական ձևի բնութագրիչները, սահմանվում է դրա հիմնային-քաղաքական բովանդակությունը:

Իրավունքի մեջ կազմակերպչական հիերարխիայի ասպեկտում անհրաժեշտ է նշել, որ իրավունքում գոյություն ունեն ըստ իրենց բնույթի տարբեր հիերարխիկ կապեր, հենված իրավունքի միասնական հիերարխիայում տարբեր մակարդակների կապերի երկու տեսակներին.

ա) ստատիկ՝ ըստ վարքագծային մոդելների «բովանդակային» կապ, որը նախատեսված է իրավունքի աղբյուրների տարբեր մակարդակների նորմատիվ-իրավական ակտերի, իսկ հավասարազոր հիերարխիկ բախումների մեկնաբանական կամ իրավակիրառ ակտերի և այլ օբյեկտների բովանդակության կիրառությամբ,

բ) դինամիկ՝ որի առկայության համար անհրաժեշտ և բավարար է վերին մակարդակում որոշակի ոլորտի կարգավորման հնարավորությունները ստորին մակարդակի կանոններով, առանց վերին մակարդակների վարքագծային կոնկրետ կանոնների սահմանման և, հետևաբար, առանց վարքագծային որոշակի տիպը անմիջականորեն կարգավորող նորմատիվ կարգավորիչ միջոցների կամ կոնֆլիկտների այլ օբյեկտների տրամաբանական հարաբերակցության բացահայտման:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Իրավունքի աղբյուրների հիերարխիկ կառուցվածքային բնութագրերը»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Աշխատանքի երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Դրական իրավունքի աղբյուրների հիերարխիկ կառուցվածքը»** վերնագրով, հեղինակը համակողմանի վերլուծության է ենթարկել գործող իրավունքի աղբյուրների հիերարխիկ կառուցվածքային առանձնահատկությունները: Այդ առանձնահատկություններն, ըստ հեղինակի, պայմանավորված են մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններով, մասնավորապես պոզիտիվ իրավունքի աղբյուրի իրավաբանական ուժը, այն ընդունող մարմնի իրավազորությունը, հանրային և մասնավոր շահերի զուգորդման աստիճանը, կարգավորվող հասարակական հարաբերությունների բնույթը և այլն, որոնք էական դերակատարում ունեն պոզիտիվ իրավունքի աղբյուրների հիերարխիկ կառուցվածքում:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի ձևերի (աղբյուրների) հիերարխիկ կառուցվածքային բնույթը»** վերնագրով, հեղինակը բացահայտում է իրավունքի աղբյուրների հիերարխիկ կառուցվածքային բնույթի իրավական, քաղաքական, սոցիալական ասպեկտները:

Աշխատանքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի համակարգում նորմատիվ կարգավորիչների հիերարխիկ տարաբնույթ կապերը»** վերնագրով, հեղինակը իրավունքի աղբյուրների համակարգը կառուցում է բազմամակարդակ, հիերարխիկ կազմակերպված բուրգի սկզբունքով, դրա հիմքում տեղակայված նորմատիվ- կարգավորիչ միջոցները միավորվում են իրավական սուբինստիտուտներում և ինստիտուտներում, դրանք՝ իրավունքի ենթաճյուղերի և ճյուղերի, որոնք (իրենց հերթին) իրավական հանրույթներում (զանգվածներում), և սահմանափակված ձևով, կազմում են իրավունքի համակարգը, ընդ որում՝ իրավունքի համակարգի յուրաքանչյուր ստորին տեղակայված մակարդակը գտնվում է սուբորդինացված հարաբերություններում վերինների հետ և յուրաքանչյուր վերին մակարդակում ծագում է էմերջենտության հատկություն:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ **«Իրավունքի համակարգում նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության (հիերարխիայի) չափորոշիչները և իրավազորությունը (իրավաբանական) ուժը»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Աշխատանքի երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Նորմատիվ իրավական ակտերի հիերարխիայի կառուցման չափորոշիչների հիմնախնդիրները»** վերնագրով, հեղինակը հանգամանորեն քննարկում է իրավական ակտերի հիերարխիայի կառուցման չափորոշիչների հիմնախնդիրը, մասնավորապես՝

իրավաբանական ուժը և ընդունող մարմնի կարգավիճակը և իրավասությունը: Որպես չափորոշիչներ հանդես են գալիս ինչպես հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտի բնույթը, այնպես էլ իրավական համակարգում ձևավորված ավանդույթը և իրավամտածողության տիպը:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Նորմատիվ իրավական ակտերի իրավաբանական ուժի վրա ազդող գործոնների համակարգը»** վերնագրով, հեղինակը հանգամանորեն քննարկում է իրավական ակտերի իրավաբանական ուժի վրա ազդող գործոնների համալիրը, մասնավորապես՝ համապետական, ճյուղային, մեկնաբանական (իրավունքի մեկնաբանության ակտերի համակարգի ազդեցություն), իրավաստեղծման ավանդույթներ, կարգավորվող հասարակական հարաբերությունների կարևորություն, համատեղ իրավաստեղծում և այլն:

Աշխատանքի երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Նորմատիվ իրավական ակտերի որպես իրավունքի մեջ ոչ տիպիկ հիերարխիկ կապերի արտահայտման աստիճանակարգությունը»** վերնագրով, հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկել նորմատիվ իրավական ակտերի որպես իրավունքի մեջ ոչ տիպիկ հիերարխիկ կապերի (հորիզոնական, ուղղահայաց, համակարգված (օրինակարգված)) ակտերի հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրները:

Աշխատանքի չորրորդ գլուխը՝ **«Նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության (հիերարխիայի) տեսական-կիրառական հիմնահարցերը»** վերնագրով, բաղկացած է երկու ենթագլխից:

Աշխատանքի չորրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Նորմատիվ իրավական ակտերի առարկայական հիերարխիայի հիմքերը»** վերնագրով, բացահայտվում են նորմատիվ իրավական ակտերի առարկայական հիերարխիայի օրինականացված - կոդիֆիկացված ակտերի և սովորական օրենքների, հատուկ և ընդհանուր օրենքների, հաջորդող և նախորդող օրենքների առաջնայնության հետ կապված հարցերը:

Աշխատանքի չորրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Նորմատիվ - իրավական ակտերի առարկայական հիերարխիայի գաղափարի հեռանկարային ներուժը»** վերնագրով, հեղինակը քննարկում է նորմատիվ իրավական ակտերի առարկայական հիերարխիայի հայեցակարգային մոտեցումների հետագա հնարավոր զարգացումների հետ կապված խնդիրները:

Եզրակացություններ

Հետազոտության արդյունքների հիման վրա, հեղինակն առաջարկում է հետևյալ

եզրակացությունները.

1. Իրավունքի տեսության և ճյուղային իրավաբանական գիտությունների մեջ գերակայում է այն մտայնությունը, որ առկա է օրինակարգված (համակարգված) ակտերի գերակայությունը չօրինակարգված ակտերի նկատմամբ: Սակայն իրավակարգավորման տեսանկյունից նման մոտեցումը ոչ բոլոր դեպքերում է արդարացված: Եթե խոսքը վերաբերում է միևնույն ճյուղային օրենսդրության համակարգում օրինակարգված և չօրինակարգված ակտերի գերակայության հարցին, ապա միանշանակ գերակայում է օրինակարգված ակտը (օրինակ՝ քազաքացիական օրենսդրությունում):

Սակայն, երբ հարցը վերաբերում է իրավունքի հարակից կամ տարբեր ճյուղերի միջև օրինակարգված և չօրինակարգված ակտերին, ապա խնդիրը պետք է լուծվի համալիր մոտեցումով՝ հաշվի առնելով սահմանադրական դրույթները, վավերացված միջազգային պայմանագրերը, նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքը և ձևավորված միջազգային պրակտիկան:

2. Ժամանակակից Հայաստանի օրենսդրական պրակտիկայում առարկայական հիերարխիան կիրառվում է նրա համար, որպեսզի ապահովվի որոշ (ոչ միշտ օրինակարգված) օրենքների ֆորմալ գերազանցումը մյուսների նկատմամբ, տարբեր օրենքներում ամրագրված նորմերի և նորմատիվ ընդհանրացումների փոխգործունեության հարցերը բովանդակային հարթությունից ֆորմալին փոխանցումը, ինչն էլ հանգեցնում է «օրենքների մրցակցության» և ապակողմնորոշում իրավակիրառողներին: Միևնույն ժամանակ, որոշ օրենքների մյուսների համեմատությամբ իրավաբանական ուժի կատեգորիան կարող է վերածվել ազգային օրենսդրության համակարգում «ամենագլխավոր օրենսգրքի» հերթական անհեռանկարային որոնման, ինչը իրավակարգավորման տեսանկյունից հիմնավորված չէ:

3. Իրավունքի աղբյուրների առարկայական հիերարխիայի գաղափարը չպետք է համարել սեփական ներուժը լիարժեք սպառած, քանի որ նրանով է պայմանավորված իրավունքի աղբյուրների կազմակերպչական, իրավունքի աղբյուրների աստիճանների և ըստ իրավական որոշումների ընդունման հիերարխիաների միջև կապի բնույթը և բովանդակությունը: Այս առումով անհրաժեշտ է առարկայական հիերարխիայի երևույթի ուսումնասիրության և շեշտադրությունների տեղաշարժ ֆորմալից բովանդակային էական կողմերին՝ իրավաբանական ուժի, ակտի սոցիալական

նշանակությանը և իրավակարգավորումների համակարգում նրա կարգավորիչ հատկանիշի անհրաժեշտությանը: Այս պարագայում առարկայական հիերարխիայի գաղափարը ձեռք կբերի առավել հայեցակարգային նշանակություն իրավակարգավորումների ոլորտում:

4. Աշխատանքում շեշտը դրվում է օրենսդրի կամքի վրա հենված օրինակարգված ակտերի ոչ թե ֆորմալ-իրավաբանական առաջնության, այլ ճյուղային կարգավորման մեջ օրինակարգված ակտերի բովանդակային առաջնության հիմքերի, սահմանների և ձևերի վրա, ինչպես նաև բացահայտվել է օրենսդրության վրա օրինակարգված (համակարգված) ակտերի հայեցակարգային դրույթների ազդեցության եղանակները:

5. Աշխատանքում հեղինակը կենտրոնացել է օրինակարգված ակտերի ստեղծման ժամանակ բովանդակության և ձևի վերաբերյալ հարցերին, իմաստավորել է այն հարցի պատասխանը, թե ինչ դեպքերում իրավական ակտն անհրաժեշտ է համարել օրինակարգված: Հետագայում, կիրառական առումով, օրինակարգված և չօրինակարգված ակտերի հարաբերակցության միջոցով բացահայտվել են իրավունքում հիերարխիկ կապերի տարբեր ասպեկտների փոխգործունեության եզրերը (նկարագրության հիերարխիա, ըստ իրավունքի աղբյուրների ընդունման շերտերի հիերարխիա, կազմակերպչական հիերարխիա): Հեղինակի կարծիքով անհրաժեշտ է կառուցել օրինակարգված ակտերում ընդգրկված նորմատիվ ընդհանրացումների և նորմերի չօրինակարգված ակտերում հաստատված իրավունքի նորմերի հետ փոխգործունեության օրինակելի մոդելը: Նման մոդելն իդեալում պետք է օգնի բացահայտել ինտելեկտուալ-կամային գործընթացները, որոնք տեղի են ունենում իրավունքի բովանդակային իմաստի մեկնաբանման ժամանակ:

6. Աշխատանքում հեղինակը փորձել է եզրագծել իրավական ակտերի ուժի ամրագրման գործընթացներում իրավաստեղծ մարմինների հայեցողության սահմանները՝ կանխելով անորակ ակտերի ընդունումը: Դրա համար անհրաժեշտ է, ըստ հեղինակի, համակողմանի ուսումնասիրել սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնների ամբողջ համախումբը, որոնք ընկած են իրավունքի աղբյուրների իրավաբանական ուժի և սոցիալական արդարության հիմքում:

7. Դատական պրակտիկայում առարկայական հիերարխիայի կիրառության թույլատրելիության վերաբերյալ հարցում որոշակիության բացակայության պայմաններում խիստ հեռանկարային հանդիսանում է նաև այնպիսի գործոնների ուսումնասիրությունը, որոնք ազդում են դատավորների այս կամ այն իրավական

դիրքորոշման ընտրության, դրա պատճառաբանման և դատական ակտում այդ պատճառաբանման դրույթների արտացոլման վրա:

8. Նորմատիվ-իրավական ակտերի կամ պոզիտիվ իրավունքի աղբյուրների աստիճանակարգության վերաբերյալ տեսության մեջ և օրենսդրությունում քիչ թե շատ գոյություն ունի միասնական մոտեցում, նույնը չի կարելի ասել իրավունքի այլ աղբյուրների, մասնավորապես սովորույթի, իրավական դոկտրինի, դատական նախադեպի վերաբերյալ, քանի որ վերջիններիս իրավական որոշակիությունը, իրավաբանական ուժը, կարգավորման ոլորտը, գործողության ժամկետը, իրավական հասցեատերերը՝ բովանդակային առումով այդքան հստակ ու միանշանակ արտացոլված չեն:

9. Իրավունքի աղբյուրների (նորմատիվ - իրավական ակտերի) հիերարխիան իրենից ներկայացնում է մակարդակ-շերտերի՝ իրավունքի աղբյուրի տարբեր տեսակների, իրավունքի առանձին աղբյուրների և դրանց կառուցվածքային հատվածների կազմակերպչական հիերարխիա: Իրավունքի ճյուղային հիերարխիան հանդիսանում է նկարագրության մակարդակների հիերարխիա վերացարկված այնքանով, որքանով հատկապես իրավունքի համակարգում ամբողջ ակնհայտությամբ դիտարկվում է հետևյալ կերպ. իրավունքի հիմնական ճյուղեր, ենթաճյուղեր, համալիր ճյուղեր, ինստիտուտներ և իրավական նորմեր, իրավահարաբերություններ և իրավակիրառ պրակտիկա:

10. Իրավունքի տեսությունում և պրակտիկայում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ նորմատիվ ակտի իրավաբանական ուժի և դրա կարգավորման առարկայի միջև կապի առկայության գաղափարը կարող է ծագել և տարածվել միայն մի շարք նախադրյալների առկայության դեպքում, որոնք են.

ա) իրավական հիերարխիայում նորմատիվ ակտի իրավաբանական ուժի վրա բացի պետապարատում իրավաստեղծ մարմնի տեղից և դիրքից ազդում են ևս մի քանի գործոններ, ինչպիսիք են՝ իրավունքի նորմերի արտահայտման ընդհանրության (վերացարկման) աստիճանը, կարգավորվող հարաբերությունների սոցիալ - իրավական նշանակությունը, ակտն ընդունելու ժամանակի հարցը, մարդկային չափումը, առավել սոցիալական արժեքի ընտրությունը, իրավակարգավորման առաջնահերթությունը և այլն:

բ) իրավունքում հիերարխիայի դիսկրետության, խզվածության, առաջնային և երկրորդային հիերարխիկ կապերի առկայության վերաբերյալ այս կամ այն

հայեցակարգային մոտեցումները, որոնք էական ազդեցություն են թողնում իրավաստեղծ գործունեության վերջնական արդյունքի վրա:

11. Ըստ հեղինակի՝ իրավունքում աստիճանակարգության (հիերարխիայի) համար բնորոշ են հետևյալ հատկանիշները.

– դա որպես բազմամակարդակ համակարգի իրավունքի տարբեր տարրերի միջև հարաբերությունն (կապն) է,

– նշված կապն արտահայտում է մեկ տարրի (ստորին մակարդակում տեղակայվածի)՝ մյուսին (վերին մակարդակում տեղակայվածին) որոշակի ենթակայություն, ընդ որում, իրավունքի՝ որպես հիերարխիկ կազմավորված կառույցի սահմաններում գոյություն ունի ստորադասության հաստատուն կարգ,

– իրավունքի մեջ հիերարխիայի մակարդակների համար բնորոշ է փոփոխականությունը, իրավունքի համակարգի մեջ հիերարխիայի յուրաքանչյուր նոր մակարդակում ծագում է տվյալ մակարդակը ձևավորող ենթամակարդակների նոր որակ և աստիճանակարգ,

– իրավունքի համակարգի մեջ տարբեր մակարդակներում գոյություն ունեցող հատկությունները և օրինաչափությունները չեն կարող հարաբերվել մեկը մյուսի նկատմամբ միայն ֆորմալ-տրամաբանական հենքի վրա, առանց հաշվի առնելով դրանց առարկայական բովանդակությունը և սոցիալական արժևորումը,

– իրավունքում հիերարխիայի առավել բարձր մակարդակի տարրերի արդյունավետ գործունեության ուղիղ կախվածությունը ստորին տարրերի փաստացի գործառնությունից:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. Իրավունքի համակարգում նորմատիվ կարգավորիչների հիերարխիկ տարաբնույթ կապերը // «Կաճառ» գիտական տարեգիրք: Երևան, 2017, էջ 43-49:

2. Իրավունքի համակարգում աստիճանակարգության (հիերարխիայի) իմաստավորման առանձնահատկությունները // «Կաճառ» գիտական տարեգիրք: Երևան, 2017, էջ 63-69:

3. Իրավունքի ձևերի (աղբյուրների) հիերարխիկ կառուցվածքային բնույթը // «Դատական իշխանություն», N 2/214, 2017, էջ 35-39:

4. Աստիճանակարգության (հիերարխիայի) համագիտական հասկացությունը, էությունը և հատկանիշները // «Արդարադատություն», 2017, Մայիս, N 2 (37), էջ 42-44:

5. Դրական իրավունքի աղբյուրների հիերարխիկ կառուցվածքը //

«Արդարադատություն», 2017, Օգոստոս, N 4 (39), էջ 39-43:

6. Նորմատիվ իրավական ակտերի հիերարխիայի կառուցման չափորոշիչների հիմնախնդիրը // «Արդարադատություն», 2017, Դեկտեմբեր, N 6 (41), էջ 27-30:

Резюме

Акопян Давид Хачатурович

Проблемы иерархии нормативно - правовых актов в Республике Армения: теоретико - правовой анализ

Актуальность исследования данной темы, прежде всего, обусловлена

коренными конституционно - правовыми изменениями, которые в последнее время произошли в правовой системе Республики Армения. Одним из важнейших требований качества нормативно - правовых актов является обеспечение строгой иерархии источников (формы) позитивного права. Поэтому можно констатировать, что без нормативно установленной иерархии источников права любые предложения науки и опыт практики по этому вопросу рискуют остаться благими пожеланиями.

Объектом данной диссертационной работы являются системные начала армянского права.

Предмет диссертационного исследования составляют понятия иерархии, факторы ее детерминирующие, правовые формы выражения иерархической зависимости, иерархические построения источников (формы) права в национальной правовой системе Республики Армения.

Научная новизна данной диссертации выражается в том, что на общетеоретическом уровне анализируются проблемы и основы концептуальных подходов проблемам иерархии нормативно - правовых актов в национальной правовой системе РА. Кроме того, новизна данной диссертационной работы заключается в том, что автор старался формулировать концептуально научно - логическую теорию иерархии нормативно - правовых актов в национально - правовой системе Республики Армения.

Автором проанализированы Конституция Республики Армения, конституционные и обычные законы, нормативно правовые акты органов исполнительной власти РА, материалы судебной практики.

При этом, автор осознает, что необходима детальная регламентация проблемы иерархического настроения нормативно - правовых актов, в том числе источников (формы) позитивного права, которая является одним из важнейших условий эффективного правового регулирования и качества действующего нормативного, интерпретационного и правоприменительного правового

материала и, следовательно, нормального функционирования всей системы нормативно - правовых актов.

Научная цель настоящего диссертационного исследования заключается в разработке концептуально - теоретических основ иерархии нормативно - правовых актов в армянской правовой системе.

Теоретическая значимость диссертации заключается в том, что сформулированные в нем теоретические положения и выводы развивают и дополняют наши знания по проблемам иерархии нормативно - правовых актов.

Материалы диссертации способствуют дальнейшей разработке концептуальных основ теории иерархик нормативных актов.

Практическая значимость работы заключается в том, что содержащиеся в работе рекомендации могут найти практическое применение в правотворческой деятельности и правореализации.

Материалы настоящего исследования могут быть использованы сотрудниками правоохранительных и правоприменительных органов, в учебном процессе по общей теории права, конституционному праву и другим отраслевым дисциплинам.

Rezume

Hakobyan David Khachatur

The Issues of Normative-Legal Acts Hierarchy in the Republic of Armenia: Theoretical-Legal Analysis

The topicality of the study of the given theme is first of all conditioned by the radical constitutional-legal changes, which have recently taken place in the legal system of the Republic of Armenia. The provision of the strict resources (form) of the positive law is one of the most important requirements of the quality of the normative-legal acts. That's why one may state that any suggestions of science and experience of practice on this issue risk to remain just wishes without normatively set hierarchy of the law resources.

The object of the given research paper is the system origins of the Armenian law.

The subject of the research paper is the notion of hierarchy, factors, its determining legal forms of expression of hierarchical dependence, hierarchical construction of sources (form) of law in the national legal system of the Republic of Armenia,

The scientific novelty of the given research paper is expressed in the fact that the problems and bases of the conceptual approaches to problems of hierarchy of normative -legal acts in the national legal system of the Republic of Armenia have been analyzed on the general -theoretical level. Besides that the novelty of the given research paper is that the author has tried to formulate the conceptual-scientific logical theory of the hierarchy of normative-legal acts in the national-legal system of the Republic of Armenia.

The author has analyzed the Constitution of the Republic of .Armenia, the constitutional and general laws, the normative-legal acts of the RA executive power bodies, the materials of judicial practice.

At the same time, the author has realized that the detailed regulation of the problem of hierarchical construction of the normative-legal acts, including sources (form) of the positive law, which is one of the most important conditions of the effective legal regulation and quality of the current normative, interpretation and law- enforcement material, and hence the normal functioning

of the whole system, normative-legal acts, is necessary.

The scientific purpose of the present research paper is the elaboration of conceptual-theoretical basis of the hierarchy of normative-legal acts in the Armenian legal system.

The theoretical significance of the research paper is that the theoretical provisions and conclusions formulated in them develop and supplement our knowledge on the problems of the normative-legal acts hierarchy.

The materials of the research paper contribute to the further elaboration of the conceptual bases of the theory of normative acts hierarchy.

The practical significance of the work is that the recommendations available in the work may find their practical application in the law-making activities of the legal realization.

The materials of the present research paper can be used by the employees of the law-enforcement bodies, in the educational process on the general theory of law, constitutional right and other branch disciplines.